

վերջին հինգ տառերու իմաստը: Շատ հավանաբար կրճատված բառերու տեղ դրված է: Ինչ որ կվերաբերի թվականին, նկատի առնելով իր հնա-

գիտական մասնահատկությունները, կարելի է պնդել, թե XVII—XVIII դարեն է:

ԱՐԱ ՄԱՐԿՈՍ (Վառնա)

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՄԻ ՆՈՐ ԲՆԱԳԻՐ

Ագաթանգեղազիտության պատմության մեջ մի նոր հետաքրքրական հայտնագործություն է վերջերս Փարիզի «Հայկական ուսմանց հանդեսի» VIII հատորում լույս տեսած «Հայոց կաթողիկոս սուրբ Գրիգորի վարքը»՝ արաբերեն բնագրով և համապատասխան ուսումնասիրության մը: Այս շնորհակալ աշխատանքը կատարել է բելգիացի հայագետ Մ. վան էսբրուքը¹:

Դեռ 1913 թ. քրիստոնյա արաբական մատենագրության լավագույն գիտակ Գ. Գրաֆը հակոբիկ ասորիների Երուսաղեմի սուրբ Մարկոս վանքի ձեռագրերի ցուցակում նշել է, որ 72 թվահամարով ձեռագրի մեջ կա «Հայաստանի կաթողիկոս սուրբ Գրիգորի վարքը»: Դա 125 հատվածներ պարունակող մի գրչագիր է, բաղկացած 745 էջից, որի 479—488 երեսները պարունակում են Գրիգորի վարքը՝ գրված ասորատառ արաբերեն (բարշունի)²: Սա թարգմանված է ասորերենից հալեպցի Բեշարա վանականի ձեռքով, որը Մերդինի մոտ գտնվող Դայր-ալ-Ջաաֆարան (հակոբիկ ասորիների կաթողիկոսանիստ) վանքում 1732 թ. փետրվարից մինչև 1733 թ. հունվար աշխատել է այս ձեռագրի վրա: Բարեբախտաբար այնտեղ նշված է, որ սրա նախատիպն է 1178 թ. կրող մի ասորական ձեռագիր, որը նույնպես 125 հատված (բնագիր) է պարունակել:

Մ. վան էսբրուքը մանրամասն քննարկում է սույն բնագիրը, որը հրատարակել է արաբատառ: Նա եզրակացնում է, որ սրա ասորերեն նախատիպը հայերենից է թարգմանված: Մինչև այժմ Ագաթանգեղոսին առնչվող բնագրերից ասորերեն հայտնի էր միայն Ագաթանգեղոսի պատմական նյութի վերաշարադրանքը, Գեորգ Ասորի արաբաց եպիսկոպոսի 714 թ. նամակում, բայց չկար որևէ թարգմանություն կամ ասորական խմբագրություն: Նոր հայտնաբերված ձեռագրից առաջին անգամ հայտնի է դառնում, որ

եղել է մի ասորական խմբագրություն ուղղակի հայերենից թարգմանված և որի արաբերեն թարգմանությունն է միայն մեղ հասել:

Աշխարհի տարբեր մասերում օրեցօր ի հայտ են գալիս Ագաթանգեղոսի նորանոր բնագրեր, մանավանդ արաբերեն և հունարեն: Ագաթանգեղոսի առաջին խմբին պատկանող խմբագրություններն են՝ մեղ հայտնի հայերեն բնագիրը (բնական հրատ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ս. Կանայանի), հունարեն թարգմանությունը (հրատ. Պ. գր լագարդ) և, վերջապես, արաբերեն թարգմանությունը (հրատ. Ա. Տեր-Ղևոնդյան) լույս տեսած 1969 թ.: Երկրորդ խմբի մեջ են մտնում այն արաբերեն և հունարեն խմբագրությունները, որոնց հայերեն բնագիրը դեռ չի հայտնաբերված և որոնք բանասիրության մեջ պայմանականորեն հայտնի են «Վարք» անվամբ՝ արաբերեն վարքը (հրատ. Ն. Մառ), հունարենը (հրատ. Ժ. Գարիտ), Օբրիդայի վարքը (հրատ. Ժ. Գարիտ), որը լույս տեսավ 1965 թ.: Ահա այս վերջին խմբին է միացնում Մ. վան էսբրուքը իր հրատարակած բարշունի (ասորատառ արաբերեն) վարքը, թեև Օբրիդայի վարքի (հայտնաբերված Մակեդոնիայի Օբրիդա վանքում) նման այս բարշունի վարքն էլ սերտորեն կապված է թե՛ առաջին, և թե՛ երկրորդ խմբերի հետ:

Իր կառուցվածքով ինքնատիպ է նոր մասը: Սկսվում է Սանատրուկի ու Թադեոսի պատմությամբ, որը մինչև օրս Ագաթանգեղոսի բնագրերում ընդհանրապես չէր եղել: Ապա շարադրվում է Գրիգորի ու Տրդատի պատմությունը, Հոփսիմյանց կույսերի նահատակությունը, Տրդատի պատժվելը, Գրիգորի ելքը Խոր Վիրապից և քրիստոնեության տարածումը Հայաստանում: Այս բոլորը շարադրված է ըստ Ագաթանգեղոսի հայտնի պատմության, սակայն բաց է թողնված ոչ միայն վարդապետությունը ամբողջովին (որն ընդհանրապես չկա օտար թարգմանությունների մեջ), այլև Գրիգորի տեսիլքը: Վերջում նորագյուտ վարքը հիշում է, որ Դարանադյաց գավառում թաղված Գրիգորի նշխարները Ջենոն կայսեր ժամանակ բարեպաշտ հովիվ Ամրայի (ասորերեն նշանակում է Գառնիկ) ձեռքով գտնվում և բերվում են Թորդան, իսկ Հերակ կայսեր ժամանակ այնտեղ մեծ եկեղեցի է կառուցվում:

¹ M. van Esbroeck, Un nouveau témoin du livre d'Agathange, Revue des Études Arméniennes, nouv. ser., t. VIII, Paris, 1971, էջ 13—167.

² G. Graf, Die literarischen Handschriften des jakobitischen Markusklosters in Jerusalem, IV. Hag:ographische Litteratur Oriens Christianus, t. 3, 1913, էջ 311—327.

Այստեղ չափազանց հետաքրքրական են առաջին (Սանատրուկ և Թաղեոս) և վերջին (նշխարների գյուտը Ջենոնի օրոք) հատվածները, որոնք օգնում են պարզելու հայկական մեղ շրջասած բնագրի խմբագրման ժամանակը: Ըստ Մ. վան էսբրուքի սրա հայերեն բնագիրը խմբագրված է VII դարի սկզբին և նույնիսկ Բլավաններ է որոշում՝ 604—610 թթ.: Հետագայում, մոտավորապես X դարում, սա թարգմանվել է ասորերեն հատրիկ ասորիների ձեռքով և ահա այս թարգմանության 1178 թ. ընդօրինակությունից է, որ բեշարա վանականը 1732—1733 թթ. թարգմանել է մեղ հասած սույն արաբերեն ձեռագիրը:

Արաբերեն բնագրում օգտագործված անանունների ու տեղանունների բանասիրական ըննությունից (էջ 99—112) Մ. վան էսբրուքը եզրակացնում է, որ սրանք հայկաբանության կնիքն են կրում (ունենալով հանգերձ որոշ առարական և արաբական ձևեր) և չի կասկածում, որ բուն բնագիրը, որից ասորերեն է թարգմանված, եղել է հայերեն: Այս հայերեն նախատիպ բնագրի մեջ եղած Սանատրուկի ու Թաղեոսի և

վերջում՝ Գրիգորի նշխարների գյուտի մասին հատվածները նա կապում է Մովսես Խորենացու պատմության հետ, քանի որ վերջինիս մոտ երկուսն էլ հիշված են: Սակայն Խորենացուն համարելով VIII դարի վերջում ապրած հեղինակ, Մ. վան էսբրուքը ենթադրում է, որ վերջինս օգտվել է այս հայերեն բնագրից: Իհարկե, պետք է նշել, որ դժվար է նման բացատրությամբ լուծել տվյալ բարդ խնդիրը, քանի որ (անկախ Խորենացու ժամանակի հարցից) Թաղեոսի վարքը դեռ կարոտ է բանասիրական լուրջ քննության: Ավելին, նորահայտ բնագիրը կարող է օգնել երկրորդ (վարք կոչված) խմբի ժամանակի հարցը լուծելուն:

Այս արժեքավոր բնագրի լույս ընծայումը մի անգամ ևս ապացուցում է, որ Ազաթանգեղոսի արաբերեն (նաև հունարեն) թարգմանությունները դեռևս լուրջ ուսումնասիրության կարոտ են և որ աշխարհի տարբեր մատենադարաններում (որոնց մի մասը դեռ ձեռագրացուցակ չունի) կան բազմաթիվ մեղ ահայտ Ազաթանգեղոսներ, մանավանդ արաբերեն:

Ա. ՏԵՐ-ՂԵՎՈՆԴՅԱՆ

МЕДАЛЬ В ЧЕСТЬ И. К. АЙВАЗОВСКОГО

В 1887 г. в торжественной обстановке был отмечен 50-летний юбилей художественной деятельности И. К. Айвазовского, в честь которого по заказу Академии художеств была выпущена медаль работы В. В. Алексеева. Эта медаль — один из интереснейших памятников персоналии русского медальерного искусства конца XIX в. — опубликована¹, поэтому считаем излишним приводить ее описание.

В отделе нумизматики Государственного Эрмитажа хранится (инв. № 7215) другая уникальная медаль с изображением И. К. Айвазовского, выбитая в 1890 г., которой посвящена данная информация.

Описание медали. Лицевая сторона: погрудное изображение художника влево. Сверху по кругу надпись: «ПРОФЕССОРЪ ЖИВОПИСИ И. К. АЙВАЗОВСКІЙ». За спиной изображения имя медальера, год и место изготовления: «ВАСЮТИНСКІЙ. ПАРИЖ. 1890». Обратная сторона медали гладкая. Медаль серебряная, диаметр — 44 мм, вес — 34,65 г. В Эрмитаже хранится

также медаль из белого металла, выбитая тем же штемпелем (инв. № 7216).

Автор медали — замечательный русский медальер Антон Федорович Васютинский (1858—1935) — является последним медальером царской России и первым медальером Советской России. В 1882 г. он поступил в Академию художеств. За годы учебы был удостоен шести медалей и отправлен за границу стипендиантом академии. С 1888 по 1893 гг. работал в Вене и Мюнхене, а затем в Париже у знаменитых медальеров Л. О. Роти, П. Дюбуа и Ж. К. Шапелена².

Создание медали в честь И. К. Айвазовского молодым художником А. Ф. Васютинским не было случайным, несмотря на то, что для великого мариниста 1890 год не был юбилейным.

В марте 1890 г. в Париже открылась выставка картин И. К. Айвазовского, на ко-

¹ См. В. Смирнов, Описание русских медалей, СПб., 1908, стр. 471.

² См. D. Robinson, Incisori Russi Anton Fedorovich Vasjutinskij, „Italia Numismatica“, 1969, № 9, стр. 3—9. Художники народов СССР. Библиографический словарь, т. 2, М., 1972, стр. 206.